ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի օգոստոսի 27-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ — *Գ. Գաբրիելյանի*, *Կ.Գրիգորյանի*, *Ա.Ղուկասյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար — *Վ.Վարդազարյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ — *Ա.Հովհաննիսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների և խորհրդականների

Օրակարգում

1. *ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:*

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

Քննարկվեցին՝

Հարց 1. *ՀՀ Արմավիրի մարզի համայնքների վարչական տարածքներում առկա հողերի կարգերի ճշգրտման և պաշտոնական շրջանառությունից թաքցված մշակվող հողատարածքների /այգիներ, ցանքատարածքներ և այլն/ հայտնաբերման անհրաժեշտության վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Գ.Գաբրիելյանին և աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Ս.Սարգսյանին՝

ՀՀ Արմավիրի մարզի համայնքների վարչական տարածքներում առկա հողերի կարգերի ճշգրտման և պաշտոնական շրջանառությունից թաքցված մշակվող հողատարածքների /այգիներ, ցանքատարածքներ և այլն/ հայտնաբերման նպատակով պատրաստել համապատասխան աշխատանքային խումբ ստեղծելու վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզպետի կարգադրության նախագիծ և սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը, աշխատանքային խմբում որպես ղեկավար ընդգրկելով մարզպետի տեղակալ Գ.Գաբրիելյանին,անդամներ՝մարզպետի

օգնականներից կամ խորհրդականներից մեկին և ներկայացուցիչներ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով, գյուղատնտեսության և բնապահպանության,քաղաքաշինության վարչություններից և հողաշինության և հողօգտագործման բաժնից:

/Ժամկետ՝ 03.09.2018թ./

Հարց 2. *Սևան-Հրազդան մայր ջրանցքի ՀՀ Արմավիրի մարզի հատվածում ջրառը կարգավորելու,հսկելու և վերահսկելու,ինչպես նաև ջրագողության դեպքերը կանխելու վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին և մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ Գ.Մելիքյանին՝

Սևան-Հրազդան մայր ջրանցքի ՀՀ Արմավիրի մարզի հատվածում ջրառը կարգավորելու,հսկելու և վերահսկելու,ինչպես նաև ջրագողության դեպքերը կանխելու նպատակով պատրաստել համապատասխան բովանդակությամբ շրջաբերական-գրություն ուղղված ՀՀ Արմավիրի մարզի հատվածում Սևան-Հրազդան մայր ջրանցքից օգտվող համայնքների ղեկավարներին և ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը ներկայացնել աշխատանքային խումբ ստեղծելու վերաբերյալ կարգադրության նախագիծ,աշխատանքային խմբում որպես ղեկավար ընդգրկելով մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին,անդամներ՝ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության,քաղաքաշինության վարչություններից,սպասարկող ՋՕԸ-ից մեկ,ինչպես նաև համապատասխան համայնքներից երկուական/մեկը համայնքապետարանից,մյուսը՝ տվյալ համայնքից/ներկայացուցիչներ:

/Ժամկետ՝ 05.09.2018թ./

Հարց 3. *ՀՀ Արմավիրի մարզպետարանում, մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական, ինչպես նաև առողջապահական հաստատություններում և համայնքապետարանների աշխատակազմերում ու համայնքային ենթակայությամբ գործող բոլոր հաստատություններում առկա թափուր պաշտոնների և անցկացվող մրցույթների մասին հրապարակվող տեղեկատվությունը պարբերաբար թարմացնելու վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին,տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին,առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հ.Հարությունյանին,կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս.Բուդաղյանին, անձնակազմի կառավարման բաժնի պետ Ն.Մարտիրոսյանին և տեղեկատվության և հասարակայնության բաժնի պետ Հ.Վարդանյանին՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանում, մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական, ինչպես նաև առողջապահական հաստատություններում և համայնքապետարանների աշխատակազմերում ու համայնքային ենթակայությամբ գործող բոլոր հաստատություններում առկա թափուր պաշտոնների և անցկացվող մրցույթների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հավաքագրմամբ և մշակմամբ թարմացնել մարզպետարանի տեղեկատվական կայքէջը,ինչպես նաև հայտարարությունների համապատասխան ցուցատախտակը:

/ժամկետ՝ 15 օրյա պարբերականությամբ/:

Հարց 4. ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտ համայնքում գործող գործարանի տնօրենի հետ հանդիպում կազմակերպելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին՝

Կազմակերպել մարզպետի հանդիպում ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտ համայնքում գործող գործարանի տնօրենի հետ:

/ժամկետ՝ 03.09.2018թ./

Հարց 5. ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ Բաղրամյանի /Բաղր./ միջնակարգ դպրոցի ջեռուցման խնդիրների վերաբերյալ տնօրեն Ա.Տոմիկյանի մասնակցությամբ քննարկում կազմակերպելու մասին:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին՝

ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ Բաղրամյանի /Բաղր/ միջնակարգ դպրոցի ջեռուցման խնդիրների վերաբերյալ տնօրեն Ա.Տոմիկյանի մասնակցությամբ կազմակերպել քննարկում:

/ժամկետ՝ 03.09.2018թ./

Հարց 6. ՀՀ Արմավիրի մարզպետի պաշտոնում Գ.Միրիջանյանի աշխատանքային 100 օրվա կապակցությամբ մարզպետի կատարած աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին և տեղեկատվության և հասարակայնության բաժնի պետ Հ.Վարդանյանին՝

ՀՀ Արմավիրի մարզպետի պաշտոնում Գ.Միրիջանյանի աշխատանքային 100 օրվա կապակցությամբ մարզպետի կատարած աշխատանքների վերաբերյալ պատրաստել համապատասխան տեղեկատվություն և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/ժամկետ՝ 03.09.2018թ./

Հարց 7. ՀՀ Արմավիրի մարզի եղեգնուտ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ռ.Մկրտչյանին համայնքապետարանի աշխատակիցներին ներկայացնելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Հովհաննիսյանին և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին՝

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ռ.Մկրտչյանին ներկայացնել համայնքապետարանի աշխատակիցներին:

/ժամկետ՝ 27.08.2018թ./

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ

29.08.2018

X

VERIFIED OCSP 29.08.2018 19:44:34 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արձ.՝
Դ.Դավթյան